ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՉԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
21	ՈՒսադիր՝ Ուսադիրներ վերնաշապիկի՝ Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝ 2) հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին: Ուսադիրը կիսափափուկ, ձգված վեցանկյուն է, երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է: Ուսադիրները մուգ կարմիր մահուդի վրա մշակված մուգ կապույտ գույնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գույնի մակաշերտով: Ուսադիրներին, ըստ դասային աստիճանի, տեղադրվում են մետաղե ոսկեգույն աստղեր, իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14 մմ տրամագծով ոսկեգույն կոճակ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով: Դատախազների դասային աստիճանների տարբերանշանները (ուսադիրներ) տեղադրվում են վերնաշապիկի աջ և ձախ ուսակարերի վրա: Արդարադատության 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա 2 մուգ կարմիր մակաշերտ է: Արդարադատության 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 3 ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 հնգաթև ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ մեկ հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով: 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա՝ մեկ մուգ կարմիր մակաշերտ է: 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 4 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 3 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 ոսկեգույն

	աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով: Ուսադիրներին աստղերը տեղադրվում են՝ 1) արդարադատության 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը մակաշերտի վրա, իսկ երրորդը՝ առաջին երկուսից բարձր, երկայնակի առանցքային գծի վրա. 2) արդարադատության 2-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա. 3) արդարադատության 3-րդ դասի խորհրդականի համար՝ երկայնակի առանցքային գծի վրա. 4) 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը դաշտի կենտրոնում, երրորդը և չորրորդը՝ առաջին երկուսից բարձր, մակաշերտի վրա. 5) 2-րդ դասի խորհրդականի համար՝ դաշտի կենտրոնում. 6) 3-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա: Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Зинтекстил в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
21	Погон Погоны для рубашки: Отличительными знаками классных чинов прокуроров Республики Армения являются погоны, которые бывают: 2) съемные (на рубашке с коротким рукавом) закрепляются на кантах по бокам плеч. Погон полумягкий, вытянутый шестиугольник с длинными параллельными сторонами, нижний конец которого прямоугольный. Погоны с орнаментным полем темно-синего цвета, разработанные на темно-красном сукне, края погон окантованы темно-красным сукном. На погонах по классному чину устанавливаются металлические золотые звезды, а с верхней стороны на расстоянии 15 мм штампована золотистая пуговица диаметром 14 мм с изображением эмблемы Республики Армения. Отличительные знаки классных чинов прокуроров (погоны) расположены) на левом и правом погонном шве рубашки. На погонах советников юстиции 1-го, 2-го, 3-го классов один темно- красный верхний слой. На погонах советника 1-го класса закрепляются 4 золотистые пятиконечные звезды, каждая диаметром 14мм, на погонах советника 2-го класса- 3 пятиконечные золотистые звезды, каждая диаметром 14мм, на погонах советника 3-го класса – 2 золотистые пятиконечные звезды, каждая диаметром 14мм. Звезды на погонах вышиты: 1. для советника юстиции первого класса – нижние две звезды на верхнем слое, а третья – выше первых двух, вдоль линии длинной оси; 2. для советника юстиции 2-го класса- на верхнем слое; 3. для советника юстиции 3-го класса- вдоль линии длинной оси; 4. для советника 1-го класса нижние 2 звезды в центре поля, 3 и 4 выше первых 2 на верхнем слое; 5. для советника 2-го класса- в центре поля; 6. для советника 3-го класса- на верхнем слое. Звезды направлены к верхнему краю погонов одним

	из лучей.